ՎՐԱՍՏԱՆ

«ՅՐԱՆՏԱՆՈՑ» (ՆԱՀԱՐԱՊԱՏԱԿ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 23 - 24 (17030) ՇԱԲԱԹ 26 ՄԱՐՏԻ 2022 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 30 ՏԱՐԻՆ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՎՐԱՍՏԱՆԸ ԱՄՆ-Ի ՀԱՎԱՏԱՐԻՄ ԲԱՐԵԿԱՄՆ Է, ՎՍՏԱՀԵԼԻ ԴԱՇՆԱԿԻՑԸ...»



Մարտի 24-ին լրացավ Վրաստանի եւ Ամերիկայի Միացյալ Նահանգների միջեւ դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակը:

Տարելիցի առիթով, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին երկրի կառավարության անունից կազմակերպեց ընդունելություն, որին ներկա էին Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին, խորհրդարանի նախագահ Շալվա Պապուաշվիլին, Վրաստանի օրենսդիր եւ գործադիր մարմինների անդամները, Վրաստանում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների, հասարակական կազմակերպությունների, լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

Ելույթ ունենալով միջոցառմանը՝ Իրակլի Ղարիբաշվիլին հայտարարեց, որ Վրաստանը Միացյալ Նահանգների հավատարիմ բարեկամն է եւ վստահելի դաշնակիցը մեր տարածաշրջանում ու նրա սահմաններից դուրս:

Ինչպես նշել է կառավարության ղեկավարը, Վրաստանի եւ ԱՄՆ-ի բարեկամությունը հիմնված է ընդհանուր արժեքների եւ ընդհանուր շահերի վրա:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ՎՐԱՀ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԱՑԻՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



Մարտի 23-ին Հայաստանում Վրաստանի գործերի ժամանակավոր հավատարմատար Իրակլի Կվանճախաձեն հանդիպում ունեցավ Հայաստանի նախագահ Վահագն Խաչատուրյանի հետ:

Հանդիպմանը Հայաստանի նախագահը ջերմությամբ խոսեց հայ-վրացական բազմադարյա կապերի ու բարիդրացիական հարաբերությունների մասին՝ ընդգծելով Հայաստանի եւ Վրաստանի միջեւ փոխգործակցության հետագա զարգացման կարեւորությունը:

Վրաստանի գործերի ժամանակավոր հավատարմատարը շնորհավորեց Վահագն Խաչատուրյանին երկրի նախագահի պաշտոնը ստանձնելու առիթով՝ համոզմունք հայտնելով, որ երկու երկրների միջեւ տարբեր ոլորտներում արդյունավետ համագործակցությունը շարունակական կլինի:

Հանդիպմանը մտքեր փոխանակվեցին վրաց-հայկական հարաբերությունների օրակարգի, համագործակցության հեռանկարային ուղղությունների շուրջ: Քննարկվեցին տարածաշրջանային անվտանգությանն ու կայունությանն առնչվող հարցեր:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՎԱԽԹԱՆԳ ԳՈՄԵԼԱՈՒՐԻ. «ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳԼԽԱՎՈՐ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄՆ Է»



Մարտի 17-ին, «Նախարարի ժամ» շրջանակներում, Վրաստանի ներքին գործերի նախարար Վախթանգ Գոմելաուրիի հաշվետվությամբ հանդես եկավ երկրի խորհրդարանում: Նախարարը պատգամավորներին ներկայացրեց իր գլխավորած գերատեսչության կողմից իրականացված աշխատանքները, խոսեց առաջիկա ծրագրերի մասին:

Վախթանգ Գոմելաուրու հաշվետվության մեկնարկին՝ պատգամավորները 1 րոպե լռությամբ հարգանքի տուրք մատուցեցին մարտի 12-ին Ռիկոթիի լեռնանցքի ավտովթարի արդյունքում զոհված երեք պարեկային ոստիկանների հիշատակին եւ իրենց ցավակցությունը հայտնեցին զոհվածների ընտանիքներին ու մերձավորներին:

«ՈՒԿՐԱԻՆԱՅՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑՈՂԸ ՆՇԱՆԱԿԱԼԻ Է ՈՒ ՑԱՎԱԼԻ»

ՆԳ նախարարի հաշվետվության զեկույցի նշանակալի հատվածը նվիրված էր Ուկրաինայում ծավալվող իրադարձություններին եւ դրա հետեւանքով տարածաշրջանում ստեղծված իրավիճակին:

- Այն, ինչ տեղի է ունենում Ուկրաինայում, մեզ համար նշանակալի է ու ցավալի: 2008 թվականի պատերազմում այդ ագրեսիայի հետեւանքները մենք զգացել ենք անմիջականորեն, եւ ես՝ որպես շարքային վրացի ու որպես ներքին գործերի նախարար, կրկին անգամ իմ աջակցությունն եմ հայտնում բարեկամ ուկրաինական ժողովրդին,- ասաց Վախթանգ Գոմելաուրին:

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

COVID - 19

ՋՈՒՐԱԲ ԱԶԱՐԱՇՎԻԼԻ. «ՄՈՏԵՆՈՒՄ ԵՆՔ ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԱՎԱՐՏԻՆ, ՍԱԿԱՅՆ ՎԱՐԱԿՄԱՆ ՆՈՐ ԱԼԻՔԻՑ ԽՈՒՍԱՓԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ՊԵՏՔ Է ՇԱՐՈՒՆԱԿԵՆՔ ՊԱՀՊԱՆԵԼ ՁԳՈՒՇՈՒԹՅՈՒՆ»

ՄԱՐՏԻ 28-ԻՑ ԲՈԼՈՐ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ, ԲԱՑԻ ՓԱԿ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՒՄ ԴԻՄԱԿ ԿՐԵԼՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԻՑ, ՉԵՂԱՐԿՎՈՒՄ ԵՆ

Մարտի 22-ին, միջգերատեսչական համակարգող խորհրդի հերթական նիստի ավարտից հետո, Վրաստանի առողջապահության նախարար Ջուրաբ Ազարաշվիլու խոսքով, կորոնավիրուսի համավարակը մոտենում է ավարտին:

- Դրական միտումով պայմանավորված՝ համավարակը մոտենում է ավարտին: Մենք այսօր հանել ենք բաց տարածքներում դիմակ կրելու պարտավորությունը: Երկուշաբթի օրվանից բաց տարածքներում դիմակ կրելու կարիք չի լինի:

Մնացել են մի քանի սահմանափակումներ՝ սոցիալական հեռավորության պահպանումը փակ տարածքներում, ինչպես նաեւ օտարերկրյա քաղաքացիների՝ երկիր մուտք գործելու սահմանափակումները:


Մենք իսկապես մոտենում ենք համավարակի ավարտին, քանի որ զգալիորեն կրճատվել է հոսպիտալացման մակարդակը,

(Շարունակությունը՝ 6-րդ էջում)

ՀՐԱՏԱՊ

ԳՐԵԹԵ ՉԻ ԼԻՆԻ ՈԼՈՐՏ, ՈՐԻՆ ՄՈՏ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԹԱՆԿԱՑՄԱՆ ԱԼԻՔԸ ՉԱՌՆՉՎԻ

Առեւտրատնտեսական կապերը թեւակոխում են նոր փուլ: Գործընթացն սկսվեց կորոնավիրուսի համավարակի տարածմանը զուգընթաց եւ առանձնակի սրվեց Ուկրաինայում ծավալվող իրադարձությունների կապակցությամբ: Եթե սկզբնական փուլում փոփոխությունները վերաբերում էին միայն սննդամթերքին, ապա ներկա դրությամբ, այն իր շրջապտույտում կներառի բոլոր ոլորտները: Կթանկանան շինանյութերը, անշարժ գույքը, մատուցվող ծառայությունների սակագները, վառելանյութը, ավտոմեքենաները, կենցաղային տեխնիկան եւ այլն: Այդ ամենն է՛լ ավելի կարագացնի արժեզրկման գործընթացը:



Իրակլի Կովզանաձե

Նման պայմաններում բնական է ազգային բանկի կողմից դրամա-ֆինանսական քաղաքականության խստացումը:


Ինչպես նշեց **Վրաստանի խորհրդարանի ֆինանսա-բյուջետային կոմիտեի նախագահ Իրակլի Կովզանաձեն**, Ռուսաստանի Կենտրոնական բանկը պատերազմի պայմաններում կտրուկ ավելացրեց վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ այն հասցնելով 20 տոկոսի, ԱՄՆ-ի դաշնային պահուստային համակարգը 2018 թվականից հետո առաջին անգամ նույնպես ավելացնում է տոկոսադրույքը:

- Բնականաբար, այս ամենը ազդեցություն է գործում Վրաստանի վրա, եւ մեր Կենտրոնական բանկը եւս խստացնելու է դրամա-ֆինանսական քաղաքականությունը,- հայտարարեց Իրակլի Կովզանաձեն:

Ինչպես մեզ հետ զրույցում նշեց **Վրաստանի խորհրդարանի նախկին պատգամավոր, «Արդյունաբերությունը կփրկի Վրաստանը» կուսակցության գլխավոր քարտուղար, ձեռներեց Ջուրաբ Տղեմալածեն**, առկա իրավիճակում ապրանքային բոլոր խմբերի գների ավելացումը դառնում է անխուսափելի: Այդ գործընթացն արդեն սկսվել է եւ տեւական բնույթ կկրի:

- Թանկացումը կառնչվի ամեն ինչին, իրավիճակը շատ ծանր է, եւ դա կարճաժամկետ բնույթ չի ունենա:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)



Ջուրաբ Տղեմալածե

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 30 ՏԱՐԻՆ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՎՐԱՍՏԱՆԸ ԱՄՆ-Ի ՀԱՎԱՏԱՐԻՄ ԲԱՐԵԿԱՄՆ Է, ՎՍՏԱՀԵԼԻ ԴԱՇՆԱԿԻՑԸ...»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

- Թույլ տվեք ընդգծել, որ USAID առաքելության հիմնադրումից ի վեր, մեր երկրում այս կազմակերպությունը ավելի քան 1,8 միլիարդ դոլար է հատկացրել Վրաստանին ու վրաց ժողովրդին: Ես օգտվում եմ առիթից եւ շնորհակալություն հայտնում ձեր կազմակերպությանը այն ամենի համար, ինչ ամերիկացի ժողովուրդն արել է Վրաստանի զարգացման համար: Մեր բարեկամությունը հիմնված է ընդհանուր արժեքների եւ ընդհանուր շահերի վրա: Մենք հավատարիմ ենք մեր երկրների միջեւ համագործակցության բոլոր ոլորտներում ամուր գործընկերության հետագա խորացմանը: Վրաստանը Միացյալ Նահանգների հավատարիմ բարեկամն ու վստահելի դաշնակիցն է մեր տարածաշրջանում եւ դրա սահմաններից դուրս: Մենք կանգնած էինք եւ կանգնած ենք ժողովրդավարական արժեքների եւ համաշխարհային անվտանգության համար պայքարի առաջնագծում: Մենք ծառայում ենք ամերիկացի զինվորների կողքին աշխարհի ամենավտանգավոր թեժ կետերում: Վրացիները հպարտանում են իրենց դերով՝ որպես անփոխարինելի գործընկերներ Սեւ ծովի անվտանգության հարթությունում: Մենք մեծապես գնահատում ենք ԱՄՆ-ի աջակցությունը մեր երկրի ինքնիշխանությանն ու տարածքային ամբողջականությանը,- հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին:

ՎՐԱՍՏԱՆ - ՆԱՏՕ

ՀԱՄԱՏԵՂ ԶՈՐԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՓՈԽՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԳՐԱՎԱԿԱՆ



Մարտի 24-ին, ի պատիվ «ՆԱՏՕ-Վրաստան զորավարժություններ 2022 թվական»-ի պատվավոր հյուրերի, անցկացվեց միջոցառում, որին ներկա էին եւ ելույթ ունեցան Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին: Միջոցառմանը մասնակցեցին Վրաստանի օրենսդիր եւ գործադիր մարմինների անդամներ, Վրաստանում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչներ:

Իր խոսքում Վրաստանի վարչապետը նշեց, որ այս զորավարժությունները Վրաստանում արդեն երրորդ անգամ են անցկացվում, որը մեծ նշանակություն ունի պաշտպանության ուժերի պատրաստվածության ամրապնդման, կառավարման բարելավման եւ դաշինքի հետ համատեղելիության բարձրացման առումով:

Կառավարության ղեկավարի խոսքով, այս զորավարժությունները Վրաստանին ՆԱՏՕ-ի հզոր քաղաքական եւ գործնական աջակցության եւս մեկ վառ ապացույց են:

Իր հերթին, Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին նշեց, որ Եվրոպայի, աշխարհի եւ Վրաստանի համար բարդ ժամանակաշրջանում կարեւոր է շարունակաբար զարգացնել երկրի պաշտպանունակությունը, ուժեղացնել նրա ճկունությունը եւ ավելացնել համատեղելիությունը ՆԱՏՕ-ի չափանիշներին:

Միջոցառմանը ելույթ ունեցան նաեւ խորհրդարանի նախագահ Շալվա Պապուաշվիլին, պաշտպանության նախարար Ջուանշեր Բուրճուլաձեն, պաշտպանության ուժերի հրամանատար, գեներալ-մայոր Գիորգի Մաթիաշվիլին, ՆԱՏՕ-ի հետախուզության հարցերով գլխավոր քարտուղարի օգնականի տեղակալ Դեյվիդ Քեթլերը եւ ՆԱՏՕ-ի ցամաքային հրամանատարության ղեկավարի տեղակալ, գեներալ-լեյտենանտ Նիկոլա Ջանելին:

Միջոցառմանը հյուրերը լսեցին ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Ենս Ստոլտենբերգի եւ Ռազմական կոմիտեի նախագահ, ծովակալ Ռոբ Բաուերի տեսաուղերձները:

Նշենք, որ Վրաստան-ՆԱՏՕ համատեղ զորավարժություններին մասնակցում են դաշինքի 20 անդամ երկրներ եւ գործընկերներ եւ ավելի քան 560 զինծառայող:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ


ՔՆՆԱՐԿՎԵՑ ՎՐԱՍՏԱՆ - USAID ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՑՄԱՆ ՀԱՐՑԸ



Մարտի 23-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հանդիպում ունեցավ քաղաքականության եւ ծրագրերի գծով ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) փոխտնօրեն Իզաբել Քոլմանի հետ:

Հանդիպմանը նշվեց այն հանգամանքը, որ այս տարի լրանում է Վրաստանի եւ ԱՄՆ-ի միջեւ դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակը, եւ երկու երկրներն այսօր ունեն ամուր ռազմավարական գործընկերություն՝ հիմնված ընդհանուր արժեքների եւ հետաքրքրությունների վրա:

Վարչապետը շնորհակալություն հայտնեց ԱՄՆ-ին անսասան քաղաքական եւ գործնական աջակցության համար, որն օգնել է ամրապնդել Վրաստանի ժողովրդավարությունը վերջին երեք տասնամյակների ընթացքում՝ հաստատելով այն որպես հուսալի եւ կենսունակ գործընկեր: Կառավարության ղեկավարն ընդգծեց, որ Վրաստանը Միացյալ Նահանգների ամենամոտ եւ վստահելի գործընկերն է տարածաշրջանում եւ հավատարիմ է ռազմավարական գործընկերության հետագա ամրապնդմանը համագործակցության բոլոր ոլորտներում: Հատկապես ուշագրավ էր USAID-ի անգնահատելի ներդրումը Վրաստանի ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդման, տարբեր ծրագրերի միջոցով տնտեսական աճի եւ եվրաատլանտյան ձգտումների աջակցության գործում: Հանդիպմանը քննարկվեց Ուկրաինայում շարունակվող ռազմական գործողությունները եւ տարածաշրջանում անվտանգության ծանր իրավիճակը:



ԱՄՆ-ՌՈՒՍԱՍՏԱՆ

ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ԵՎ ՎԱՇԻՆԳՏՈՆՈՒՄ ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԵՆ ՓԱԿՎԻ

Ամերիկայի Միացյալ Նահանգները չի պատրաստվում փակել իր դեսպանությունը Մոսկվայում: Ավելի վաղ հայտարարվել էր, որ Մոսկվան շահագրգռված չէ Ռուսաստանի եւ Միացյալ Նահանգների միջեւ դիվանագիտական առաքելությունները փոխադարձաբար փակելու մեջ: Նշվում է, որ ներկա իրավիճակում հաղորդակցության այդ խողովակները շատ կարեւոր են:

ՆԱՏՕ

ԱԼՅԱՆՍԸ ՈՒԿՐԱԻՆԱ ԶՈՐՔ ՉԻ ՈՒՂԱՐԿԻ

Հյուսիսատլանտյան դաշինքը չի պատրաստվում զորք ուղարկել Ուկրաինա: Այս մասին մարտի 23-ին Բրյուսելում մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարեց ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Ենս Ստոլտենբերգը:

- ՆԱՏՕ-ն հակամարտության մաս չի կազմում, սակայն աջակցում է Ուկրաինային: ՆԱՏՕ-ն Ուկրաինա զորք չի ուղարկի: Պետք է հասկանալ, որ կարեւոր է սատարել Ուկրաինային, սակայն կարեւոր է նաեւ կանխել Ռուսաստանի եւ ՆԱՏՕ-ի միջեւ պատերազմը: Այդ իսկ պատճառով, մենք հստակ ասել ենք, որ զորք Ուկրաինա չենք ուղարկի,- ասաց նա:

ՌՈՒՍԱՍՏԱՆ

ԲՆԱԿԱՆ ԳԱԶԸ ԿՎԱՃԱՌՎԻ ՌՈՒՍԱԿԱՆ ՌՈՒԲԼԻՆԵՐՈՎ

ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի խոսքով, Ռուսաստանի «ոչ բարեկամ երկրները» ռուսական բնական գազը, դոլարի ու եվրոյի փոխարեն, կգնեն ռուբլով:

ՌԴ նախագահի հրամանագրով, ՌԴ-ն կշարունակի գազ մատակարարել պայմանագրով նախատեսված ծավալներին ու գներին համապատասխան, թեեւ արեւմտյան երկրները պետք է վճարեն ռուսական ազգային արժույթով:

ԵՎԱՄԻՈՒԹՅՈՒՆ

ՌՈՒՍԱԿԱՆ ԳԱԶԻՑ ԵՎ ՆԱՎԹԻՑ ԿԱԽՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՀՊԱՆՎՈՒՄ Է

Եվրամիության երկները դեռեւս կախվածության մեջ են Ռուսաստանից ներկրվող բնական գազից ու նավթամթերքից, եւ կարճ ժամանակամիջոցում այդ կախվածության չեզոքացումն անհնար է:

Նման եզրահանգում է վավերացվել Բրյուսելում, եվրամիության անդամ երկրների ղեկավարների հանդիպմանը, որտեղ քննարկվել է Ռուսաստանի դեմ պատիժամիջոցների խորացման հարցը:

ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

ՈՒԿՐԱԻՆԱ. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ ՄԵԿ ԱՄԻՍԸ

Արդեն մեկ ամիս է, ինչ Ուկրաինայում շարունակվում է ռուս-ուկրաինական ռազմական դիմակայությունը:

Անցած մեկ ամսվա ընթացքում երկու կողմերը տվել են արդեն տասնյակ հազարների հասնող զոհեր, դրանից շատ ավելի վիրավորներ: Ուկրաինայից տարեգրված մարդկանց թիվը մոտենում է յոթ միլիոնի: ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի տվյալներով, Ուկրաինայում 7,5 միլիոն երեխաներից 4,3 միլիոնը տեղահանվել է ռուսական ագրեսիայի պատճառով, որոնցից 1,8 միլիոնը լքել է երկիրը:

Չնայած, որ ռուսական զորքերին հաջողվել է գրավել Ուկրաինայի տարածքի գրեթե մեկ երրորդը, մարտերը շարունակվում են ռուսների կողմից շրջափակված Խարկով, Մարիուպոլ, Նիկոլաեւ քաղաքներում, կիսաշրջափակման մեջ է մայրաքաղաք Կիեւը:

Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկին իր հեթական տեսաուղերձում Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի հետ հանդիպման պատրաստակամություն հայտնեց՝ նշելով միայն, որ հանդիպմանը քննարկվելու են ոչ թե վերջնագրերը, այն հրադադարի կոնկետ պայմանները: Նրա հավաստմամբ, բանակցությունների հնարավոր հիմք կարող են ծառայել Ուկրաինայի կողմից ՆԱՏՕ-ին անդամակցության հրաժարումը եւ երկրին անվտանգության կայուն երաշխիքների տրամադրումը: Միաժամանակ, Ուկրաինայի նախագահն օգնության խնդրանքով շարունակում է տեսաուղերձները եվրոպական երկրներին:

ՈՒԿՐԱԻՆԱՑԻ ԵՐԵԽԱՆԵՐԸ ՕՊԵՐԱՏԻՎ ԿԱՐԳՈՎ ԿԸՆԴՈՒՆՎԵՆ ՎՐԱՍՏԱՆԻ ԴՊՐՈՑՆԵՐ ԵՎ ԹԲԻԼԻՍՅԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐ

Ցանկության դեպքում, Ուկրաինայից Վրաստան տեղափոխված երեխաները դյուրինացված կարգով կարող են գրանցվել Վրաստանի դպրոցներում:

Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության հայտարարության համաձայն, ուկրաինացի երեխաները կարող են սովորել երկրի ինչպես պետական, այնպես էլ՝ մասնավոր դպրոցներում: Նրանք կարող են ընտրել նաեւ ուսուցման լեզուն: Երեխաները կգրանցվեն այն դասարաններում, որտեղ նրանք մինչ այդ սովորում էին իրենց դպրոցներում: Վրաստանում ուսումը շարունակել ցանկացողները պետք է համապատասխան հայտով դիմեն կոնկրետ դպրոցին:

Ուկրաինայից եկած երեխաների համար արտոնություն է սահմանել նաեւ Թբիլիսիի քաղաքապետարանը: Ինչպես նշեց քաղաքապետ Կախա Կալաձեն, Թբիլիսիի մանկապարտեզներն անվճար կընդունեն ուկրաինացի երեխաներին: Բացի այդ, քաղաքապետի հայտարարությամբ, քաղաքապետարանը կշարունակի նյութական աջակցության ցուցաբերումը ուկրաինական ընտանիքներին:

Նշենք, որ ներկա դրությամբ, քաղաքապետարանի նախաձեռնությամբ, միայն Թբիլիսիում հանգանակվել եւ Ուկրաինա է առաքվել 1 միլիոն 117 հազար լարի:

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԵՑ «ՀԱՄԱՆԵՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԸ

Վրաստանի խորհրդարանն առաջին ընթերցմամբ քննարկեց «Համաներման մասին» օրենքի նախագիծը եւ 91 ձայնով ընդունեց այն: Օրենսդրական նախաձեռնության համաձայն, օրենքի նախագիծը քննարկման է ներկայացրել Մարդու իրավունքների եւ քաղաքացիական հնտեգրման խորհրդարանական հանձնաժողովի նախագահ Միխեիլ Սարջվելաձեն:


- Գաղափարն առաջացել է այն ժամանակ, երբ համավարակի պատճառով անհրաժեշտ է եղել սահմանափակումներ ունենալ քրեակատարողական համակարգի վրա: Բանտարկյալները, ելնելով իրենց անվտանգության եւ առողջության շահերից, որոշակի սահմանափակ հաղորդակցություն են ունեցել արտաքին աշխարհի, ընտանիքի անդամների հետ:

Նախաձեռնված տարբերակը նախատեսում է, որ նման պայմաններում անցկացրած յուրաքանչյուր չորս օրը պետք է համարվի բանտարկյալի պատիժը կրելու հինգ օր, ինչը կհանգեցնի պատժի վերահաշվարկին,- պարզաբանեց Միխեիլ Սարջվելաձեն:

Բացի այդ, համաներումը կարող է նվազեցնել պայմանական վաղաժամկետ ազատման կամ ձեռնաշղթա կրելու ժամկետները: Կարելի է քննարկել նաեւ որոշ կատեգորիաների բանտարկյալների, օրինակ՝ տարեցների, անչափահասների, կանանց համար համեմատաբար ավելի բարձր նպաստների հնարավորությունը: Այս հարցերի վերաբերյալ մենք կունենանք հաստատված դիրքորոշում երկրորդ լսման համար եւս,- ասել է զեկուցողը:

Երկրորդ ընթերցմամբ կքննարկվեն նաեւ համաներման կատարման պարզ ձեւերը դատարանի ծանրաբեռնվածություն չառաջացնելու համար:

Ինչպես իր խոսքում նշեց զեկուցողը, օրինագծի վերաբերյալ քաղաքացիներից միջնորդություն է ներկայացվել, որը չի կիսվել այն ֆորմալ պատճառով, որ նախագիծն արդեն նախաձեռնված է եւ քննարկվում է: Երկրորդ դատական նիստում անխուսափելիորեն կդիտարկվեն եւ հաշվի կառնվեն միջնորդների տեսակետները:



ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐ՝ ՆՈՎՐՈՒԶ ԲԱՅՐԱՄԻ ԱՌԻԹՈՎ



Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին, վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, խորհրդարանի նախագահ Շալվա Պապուաշվիլին, հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարար Թեա Ախվլեդիանին Վրաստանի էքնիկ ադրբեջանցիներին, երկրի մահմեդական բնակչությանը շնորհավորեցին Նովրուզ Բայրամի առիթով:

Տոնի կապակցությամբ, երկրի ղեկավարներն այցելեցին Մառնեուլի եւ հանդիպում ունեցան տեղի բնակիչների հետ:

ՄԱՐՏԻ 21-Ը ՎՐԱՑ ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՕՐՆ Է

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին շնորհավորել է բոլոր լրագրողներին վրաց լրագրության օրվա կապակցությամբ: - Շնորհավորում եմ բոլոր լրագրողներին, հեռուստատեսության, ռադիոյի, տպագիր եւ էլեկտրոնային լրատվամիջոցների ներկայացուցիչներին վրաց լրագրության օրվա առթիվ:

«Մեր կառավարությունը երաշխավորում է ազատ, բազմակարծիք լրատվամիջոցների միջավայրը: Հեղինակավոր միջազգային կազմակերպությունների հետազոտությունների համաձայն, «Վրացական երազանքի» իշխանության գալուց հետո իրականացված բարեփոխումների արդյունքում, զգալիորեն բարելավվել է լրատվամիջոցների ազատության աստիճանը»,- նշված է ողջույնի ուղերձում:

ՌԵԿՈՐԴԱՅԻՆ ՃԱՎԱԼԻ ԷԼԵԿՏՐԱԷՆԵԳԻԱ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Վրաստանը 2022 թվականի հունվարից վերսկսել է Հայաստանից էլեկտրաէներգիա գնել: Վրաստանի «Էներգետիկ հաշվեկշռի» փաստաթղթի համաձայն, այս տարվա առաջին երկու ամսում Հայաստանից ձեռք է բերվել 136 մլն կիլովատ ժամ էլեկտրաէներգիա: Ըստ վրաստանյան էլեկտրաէներգիայի շուկայի օպերատորի (ESCO-ի)՝ 2021, 2020 եւ 2019 թվականներին Վրաստանը Հայաստանից էլեկտրաէներգիա չի գնել, իսկ 2018 թվականի ընթացքում Հայաստանից ձեռք է բերել 8 մլն կիլովատ ժամ, 2017-ին՝ 127 մլն, 2015-ին՝ 86 մլն, 2014-ին՝ 2 մլն կիլովատ ժամ, 2013-ին, 2012-ին եւ 2016-ին ընդհանրապես չի գնել:

ESCO ընկերությունը նշում է, որ դեռ հայտնի չէ, թե ինչ գնով է Վրաստանը Հայաստանից էլեկտրաէներգիա գնում:

2022 թ. Վրաստանի կողմից գնված 251 մլն կիլովատ ժամն ըստ երկրների բաշխված է հետեւյալ կերպ. Հայաստանից՝ 136 մլն կիլովատ ժամ (նախորդ տարվա համեմատ գրանցվել է աճ), Ադրբեջանից՝ 114,8 մլն կիլովատ ժամ (նախորդ տարվա համեմատ անկումը 62 տոկոս է), Ռուսաստանից (բացառությամբ Աբխազիային մատակարարվող էլեկտրաէներգիայի)՝ 52 միլիոն կվտ ժամ, Թուրքիայից այս տարի չի գնել, իսկ անցյալ տարի՝ 7,5 մլն կիլովատ ժամ:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ԳԻԱ ՎՈԼՍԿԻ. «ՎՐԱՍՏԱՆԸ ՉԻ ՍԿՍԵԼ ԵՎ ՉԻ ՍԿՍԻ ԽՈՍԵԼ ՉԵԶՈՔՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»



Վրաստանի խորհրդարանի նախագահի առաջին տեղակալ Գիա Վոլսկին, մեկնաբանելով ընդդիմադիր կուսակցությունների ներկայացուցիչների կողմից «Վրաստանի չեզոքության մասին» շահարկվող տեղեկատվությունը, հայտարարեց, որ բացառված չէ, որ ՆԱՏՕ-ի անդամակցության գործընթացը ժամանակի տեսանկյունից ձգձգվի:

Սակայն երկիրը միջազգային մակարդակով չպետք է փոխի իր դիրքորոշումը:

- Վրաստանի չեզոքության մասին խոսակցություն չի սկսվել եւ չի էլ սկսվի, քանի որ երկիրը մեծ էներգիա եւ մարդկային կյանք է ներդրել միջազգային գործընկերների հետ համագործակցության ամրապնդման համար,- հայտարարեց խորհրդարանի առաջին փոխնախագահը եւ հավելեց, որ այնպիսի հարցեր, ինչպիսիք են ՆԱՏՕ-ին անդամակցելը, տարածաշրջանային ու միջազգային անվտանգությունը, պետք է լուծվեն գործընկերների հետ:

- Չեզոքության հարցը բավական բարդ է, քանի որ մենք տեսնում ենք, թե ինչպես են զարգանում իրադարձությունները Ուկրաինայում, ինչպիսի դիրքորոշում ունի ՆԱՏՕ-ն եւ հենց Ուկրաինան:

Ինչ վերաբերում է ՆԱՏՕ-ին անդամակցելուն, ապա մեր եւ ՆԱՏՕ-ի հարաբերությունները բավականին տեւական պատմություն ունեն եւ, իհարկե, մենք մեծ հույսեր ունենք, որ այս ճանապարհն անվտանգ կլինի մեր երկրի համար, եւ մեր գործընկերները հնարավորություն կունենան ապահովելու մեր երկրի անվտանգությունը,- հայտարարեց Գիա Վոլսկին:

Անդրադառնալով խորհրդարանում եւ ոչ միայն խորհրդարանում ընդդիմադիր կուսակցությունների կողմից ներկայացվող պահանջներին ու շահարկվող թեմաներին՝ Վրաստանի խորհրդարանի առաջին փոխխոսնակը նշեց, որ Վրաստանում ստեղծված իրավիճակը, այդ թվում՝ նախկին նախագահ Միխեիլ Սաակաշվիլու հիմնադրած, ընդդիմադիր «Միասնական ազգային շարժման» եւ նրա արբանյակների վնասակար գործունեությունը պետք է հանգամանորեն քննել:

- Փաստ է, որ տարածաշրջանում պատերազմ է ընթանում, եւ դա էական ազդեցություն ունի հատկապես անվտանգության վրա: Վրաստանում ստեղծված իրավիճակը, այդ թվում՝ «Միասնական ազգային շարժման» եւ նրա արբանյակների այս վնասակար գործունեությունը, որն արդեն ակնհայտ է, չի կարելի անտեսել,- հայտարարեց Գիա Վոլսկին:

ՈԼՈՐՏ

ԱՐՏՈՆՅԱԼ ՎԱՐԿԵՐ ՖԵՐՄԵՐՆԵՐԻՆ



Վրաստանի բնապահպանության եւ գյուղատնտեսության նախարար Օթար Շամուգիան լրագրողներին ներկայացրեց երկրի կառավարության կողմից ընդունած գյուղատնտեսական արտադրության աճին նպաստող երկու կարեւոր նախագծերը:

- Տարիների ընթացքում մենք իրականացրել ենք շատ կարեւոր, աջակցող ծրագրեր՝ ուղղված գյուղատնտեսական արտադրանքի արժեշղթայի տարբեր հատվածների զարգացմանը, ինչպիսիք են բազմամյա այգիների մշակումը, տեխնիկական աջակցությունը, պահեստավորման եւ վերամշակման տնտեսությունների ստեղծումը, նոր գյուղացիական տնտեսությունների ներդրում եւ այլն: Ընդհանուր առմամբ, այս ծրագրերի արդյունքում վերջին տարիներին ոլորտում ներդրվել է շուրջ 4,5 մլրդ լարի, որի զգալի մասը ստացվել է մասնավոր ներդրումներից, ինչը կարեւոր է երկրի հետագա զարգացման համար: Հաշվի առնելով ներկա իրողությունը եւ տարածաշրջանում տեղի ունեցող զարգացումները, կարեւոր է աջակցել գյուղատնտեսական արտադրանքի աճին մեր երկրում ինքնաբավության բարձրացման համար, եւ, հետեւաբար, այսօր որոշվել է երկու կարեւոր ծրագիր: Սա արտոնյալ ագրոպարկային ծրագրում առաջին փոփոխությունն է, որը գյուղացիներին թույլ կտա ստանալ արտոնյալ վարկ տարեկան մշակաբույսերի արտադրության համար, որով նրանք կֆինանսավորեն իրենց շրջանառու միջոցների համար անհրաժեշտ դրամական միջոցները, ըստ էության այնպիսի կարիքների համար, ինչպիսին է սերմացուն, վառելիքը եւ այլ սարքավորումներ: Պետությունը սուբսիդավորելու է նման վարկերի ինը տոկոսը,- նշեց Օթար Շամուգիան եւ հավելեց, որ, ընդհանուր նախագծի համաձայն, բանկի կողմից թողարկված տոկոսադրույքը չպետք է գերազանցի 18 տոկոսը:

- Այս նախագծով մենք սուբսիդավորելու ենք տոկոսադրույքի առնվազն կեսը: Կարծում ենք՝ սա էապես կնպաստի մեր ֆերմերների էժան դրամական միջոցներին երկրում միամյա մշակաբույսերի արտադրության համար: Բացի այդ, երկրորդ կարեւոր որոշումը, որն ընդունվել է, գյուղատնտեսական կոոպերատիվներին աջակցելն է: Մենք տարիներ շարունակ կարեւոր ծրագրեր ենք իրականացնում, որոնք միտված են խթանելու համագործակցությունը գինեգործության, կաթնամթերքի, մեղվաբուծության ու այլ ոլորտներում, ինչպես նաեւ ապարատային աջակցության ուղղությամբ: Կոոպերատիվներին աջակցելուն ուղղված նոր ծրագրով նախատեսվում է պետական համաֆինանսավորում շատ բարձր՝ 80 տոկոս համաֆինանսավորմամբ բանջարաբոստանային տնտեսությունների ստեղծման համար: Այսինքն՝ բանջարեղեն արտադրող գյուղացիական տնտեսությունները, ֆերմերները կարող են միավորվել՝ ստեղծելու կոոպերատիվ, եւ եթե բավարարեն կառավարության հատուկ որոշմամբ սահմանված պայմանները, ապա բանջարեղենի պահեստավորման ֆերմայի համար պետությունից համաֆինանսավորում կստանան ընդհանուր արժեքի 80%-ի չափով: Իհարկե, այս ամենը նպատակաուղղված է նրան, որ մեր ֆերմերներին հնարավորություն ընձեռվի պահպանել իրենց արտադրանքը ժամանակակից, բոլոր ստանդարտներին համապատասխան եւ պարբերաբար՝ շուկա մատակարարել այնպիսի պայմաններ, որոնք ավելի ձեռնտու կլինեն նրանց համար եւ պահպանեն արտադրանքի որակը,- ընդգծեց բնապահպանության եւ գյուղատնտեսության նախարարը:

ՍԻՄՈՆ ԿԻԼԱՋԵ

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

ԺԱՆՆԱ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ.«ՄԵՐ ԲՈՒՀԻ ՀԱՅԱԶԳԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐՆ ԱՐԴԵՆ ԱՇԽԱՏՈՒՄ ԵՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐՈՒՄ»

Աշխարհի հայտնի լեզվաբանները սիրում են կրկնել՝ «Վրացերենն ու հայերենը աշխարհի ութերորդ հրաշալիքներն են»: Եվ իհարկե, դժվար է «Ութերորդ հրաշալիքների» ուսուցումն ու ուսուցման ծառայությունը: Հավանաբար կհամաձայնեք, որ մեծ ջանքեր են պահանջվում, որպեսզի մեր երկրի հայ երիտասարդները սովորեն վրաց լեզուն, մեծ ջանքեր են պետք յուրաքանչյուր հնչյունին սեր ու յուրաքանչյուր բառին քնքշանք հաղորդելու համար: Կան մարդիկ, ովքեր տասնամյակներ շարունակ ծառայում են այդ գործին, չեն ընկճվում բարձրալեռ տարածաշրջանների բնական ծանր պայմաններից, իրենց աշխատանքը կատարում են լուռ ու արհեստավարժ մակարդակով: Այժմ ցանկանում ենք պատմել նման մարդկանցից մեկի մասին:



Ժաննա Խաչատուրյանը Ախալցիխեի Սամցխե-Ջավախեթիի համալսարանի Ախալքալաքիի մասնաճյուղի վրաց լեզվի գործնական քերականության եւ ուղղագրության ուսուցիչն է: Մի քանի ամիս առաջ պաշտպանեց ատենախոսություն եւ ստացավ բանասիրության դոկտորի աստիճան: Ասպինձայում ծնված ու մեծացած աղջիկը՝ որպես ուսուցչուհի Ախալքալաքիի ցուրտ եւ դաժան կլիմայական պայմաններում աշխատելը համարում է Աստծո կամքը: Քսան տարի առաջ չի էլ խորհել այն մասին, որ Ախալքալաքիում համալսարանի բացմամբ, կկատարի պետական նշանակության քայլ, որ ազգային մեծ գործի ծառայությանն են նվիրված բոլոր այն մարդիկ, ովքեր դարձան այս օջախ՝ որպես ուսուցիչ եկած անդամներ:

Ժաննան՝ որպես գերազանցիկ ուսանողուհի, Ախալքալաքիի բարձրագույն հանրակրթական համալսարանի բացումից հետո, ստացավ այնտեղ մանկավարժ աշխատելու առաջարկություն: Արդեն քսան տարի է, ինչ ծառայում է իր սիրած մասնագիտությանը: Այսօր հայազգի երիտասարդների պետական լեզվի՝ վրացերենի ուսուցումը նրա սիրելի գործունեությունն է:

- ***Գերմանացի երգահան Կարլ Վեբերը ասում էր. «Որպես մարդ՝ մեզ ստեղծում են մեր մայրն ու հայրը, իսկ մարդկայնություն մեզ տալիս է դաստիարակությունը»: Ձեր մեջ մարդու եւ մարդկայինի հիանալի սինթեզ է ձեւավորվել: Այդ սինթեզին հասնելու համար, ի՞նչ ճանապարհ եք անցել: Պատմեք ձեր մասին՝ մի պահ վերհիշելով Ձեր դպրոցական եւ ուսանողական տարիները:***

- Ծնվել եւ մեծացել եմ մի հիանալի պատմական ու հյուրընկալ շրջանում՝ Ասպինձայում: 1997 թվականին ավարտել եմ Ասպինձայի միջնակարգ դպրոցը: Բախտս բերեց, քանի որ հրաշալի ուսուցիչներ եւ համադասարանցիներ ունեի: Դեռեւս դպրոցական տարիներից անձնվիրաբար սիրում էի վրաց լեզուն, սակայն, երբ ծագեց մասնագիտություն ընտրելու հարցը, ես, որ ծնվել ու մեծացել եմ ավանդական հայկական ընտանիքում, որոշեցի սովորել օտար լեզու, իսկ ավելի ստույգ՝ հանձնեցի գերմաներենի բաժինը՝ դառնալով Իվանե Ջավախիշվիլու անվան Թբիլիսիի պետական համալսարանի Ախալցիխեի մասնաճյուղի օտար լեզուների ֆակուլտետի ուսանողուհի:

Չորս գեղեցիկ եւ արգասաբեր տարիներ անցկացրի համալսարանում, սովորում էի ինչպես գերմաներեն, այնպես էլ՝ վրաց լեզու ու գրականություն: Պետք է խոստովանեմ, որ բացառիկ վերաբերմունք ունեի վրաց լեզվի եւ գրականության նկատմամբ: Չեմ ցանկանում այնպիսի տպավորություն ստեղծվի, որ գերմաներենը պակաս էի սիրում: Ո՛չ, ուղղակի ցանկանում եմ ասել, որ ինձ ավելի վստահ եւ երջանիկ էի զգում, երբ առնչվում էի վրաց լեզվին ու գրականությանը, ձգտում՝ բաց չթողնել ուսանողական եւ ոչ մի խորհրդաժողով:

Համալսարանն ավարտելուց հետո, իմ մեջ ծագեց մագիստրատուրայում ուսումը շարունակելու ցանկություն: Ցավոք, այն ժամանակ մեր համալսարանում մագիստրատուրայի ծրագիր չկար, հետեւաբար, ուսումը պետք է շարունակեի Թբիլիսիում, ինչի հնարավորությունն այն ժամանակ մեր ընտանիքը չուներ: Թեեւ կարող եմ ասել, որ իմ կյանքի եւ ոչ մի րոպեն առանց աշխատանքի չի անցել: Չորրորդ կուրսի ուսանող էի, երբ համարձակվեցի դպրոցի աշակերտներին սովորեցնել գերմաներեն: Ի զարմանս ինձ՝ անփորձ աղջկաս, որպես ուսուցչուհի իրենց զավակներին վստահեցին մի քանի հիանալի ընտանիքներ: Սկսեցի անձնուրաց աշխատել, սովորում ու սովորեցնում էի, որպեսզի արդարացնեի այդ մարդկանց հույսերը:

Մայրս մշտապես հիշեցնում էր իմ ստանձնած պարտավորության մասին եւ անընդհատ կրկնում հայտնի ասացվածքը. «Անձնական կյանքի սրբությունը պարտադիր պայման է այն գործի, երբ մեկ ուրիշին ես դաստիարակում ու կրթում»: Ես ամեն օր համոզվում եմ այս ասացվածքի ճշմարտության մեջ:

- ***2002 թվականին Ախալքալաքիում տեղի ունեցավ պատմական իրադարձություն՝ բացվեց Թբիլիսիի պետական համալսարանի Ջավախեթիի մասնաճյուղը: Ինչպե՞ս սկսվեցին Ձեր հարաբերությունները այդ համալսարանի հետ: Հետաքրքիր է՝ ինչպիսի՞ն է մնացել Ձեր հիշողության մեջ այն օրերի համալսարանը:***

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՎԱԽԹԱՆԳ ԳՈՄԵԼԱՈՒՐԻ. «ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳԼԽԱՎՈՐ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄՆ Է»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ՆԵՐԴՐՎՈՒՄ Է ԹԱՂԱՄԱՍԱՅԻՆ ԻՐԱՎԱՊԱՀ ՍՊԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Անդրադառնալով ներքին իրավիճակին՝ ՆԳ նախարարը խոսեց քրեական ոստիկանության բարեփոխման շրջանակներում իրականացված միջոցառումների մասին, նշեց, որ միայն Թբիլիսիի տարածքով բոլոր թաղամասերում արդեն աշխատում է շուրջ 400 իրավապահ սպա: Նախարարի պարզաբանմամբ, բարեփոխումը շարունակվում է, եւ հիմնադրույթի լիարժեք կիրարկման համար, աստիճանաբար կավելացվի իրավապահ սպաների թիվը, եւ այդ ծառայությունը կներդրվի երկրի բոլոր խոշոր քաղաքներում:

ԱՆՋԻՔՈՒՄ ՊԱՅՔԱՐ՝ ԹՄՐԱՎԱՃԱՌՔԻ ԴԵՄ

Խորհրդարանին ներկայացված իր հաշվետվության մեջ Վախթանգ Գոմելաուրին խոսեց նաեւ թմրահանցագործության եւ երկրի տարածք թմրանյութերի ապօրինի ներկրման դեմ պայքարի մասին՝ նշելով, որ 2021 թվականին գերատեսչության կողմից ձերբակալվել է 136 թմրանյութ իրացնող:

- Վերջին հինգ տարիների ընթացքում ամենաշատ թմրահիրացնող է ձերբակալվել 2021 թվականին: Խորհրդարանը հաստատել է ներքին գործերի նախարարության հեղինակությամբ մշակված երկու օրինագիծ: Կատարված փոփոխությունների համաձայն, թմրանյութերի վաճառքի համար պատժամիջոցը սահմանվել է ազատազրկում՝ նվազագույնը տասը տարով: Առանձնակի մեծ ծավալի թմրանյութի վաճառքի համար, անձին կարող է սպառնալ 12-17 տարվա ազատազրկում: Իսկ բացառիկ մեծ ծավալի թմրանյութերի վաճառքի համար՝ 14-20 տարվա կամ ցմահ բանտարկություն,- ասաց ՆԳ նախարարը:

ԱՌԱՋՆԱՀԵՐԹԱՅԻՆԸ ՊԱՅՔԱՐՆ Է ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Իր հաշվետու զեկուցման մեջ, Վախթանգ Գոմելաուրին խոսեց իրավախախտումների դեմ պայքարում իրականացված միջոցառումների եւ գերատեսչության կողմից ձեռք բերած արդյունքների մասին:

- Անցյալ տարի քրեական պատասխանատվության է ենթարկվել երկու օրինական գող, «գողական աշխարհի» աջակցության մեղադրանքով պատասխանատվության է ենթարկվել 75 անձ: 2021 թվականին ՆԳՆ ոստիկանության կցորդների անմիջական մասնակցությամբ, Եվրոպայի տարբեր երկրներում անցկացվել է համատեղ 12 միջոցառում,- ընդգծեց Վախթանգ Գոմելաուրին:

ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀՈՒՍԱԼԻՈՐԵՆ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ ԵՆ

ՆԳ նախարարը, խոսելով սահմանագծի վերահսկման եւ դրա անվտանգության մասին, նշեց, որ, գերատեսչությունը, պետական անվտանգության ծառայության հետ, սկզբունքային բոլոր միջոցառումներն իրականացնում է, որպեսզի սահմանները լինեն առավել պաշտպանված:

Արձագանքելով Ռուսաստանի քաղաքացիների կողմից Վրաստան մուտք գործելու վերաբերյալ վերջին ժամանակներում տարածված աղմկահարույց տեղեկատվությանը՝ Վախթանգ Գոմելաուրին նշեց, որ 2021 թվականներին համավարակի պատճառով սահմանները հիմնականում փակ էին:

- Ռուսաստանի քաղաքացիների կողմից Վրաստանի պետական սահմանի հատման փաստերի ավելացումը վավերացվել է երրորդ երկրներով, ինչը պայմանավորված է այլ երկրներից Ռուսաստանի օդային տարածքի փակման հետ: Ռուսաստանի քաղաքացիները, հիմնականում՝ հյուսիսկովկասցիները, Թուրքիայից Սարփի անցակետի անցումով, մուտք են գործում Վրաստան, տարանցում Ռուսաստանի տարածք՝ Դարիալի անցակետով,- նշեց ՆԳ նախարարը:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԿԱՐԳՈՒՄ

ՆԳ նախարարը վերահաստատեց վարորդական իրավունքի հետ կապված փոփոխությունները:

Նրա խոսքով, 2022 թվականի ապրիլի 25-ից՝ մարդատար ավտոմեքենաների, իսկ նոյեմբերի 7-ից՝ բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների, իրական պայմաններում վարորդական իրավունքի տեսական քննության հանձնումը պարտադիր կդառնա:

- Եվրամիության հետ Ասոցիացման համաձայնագրի շրջանակներում, 2021-ին կատարված փոփոխությունների համաձայն, AM կատեգորիայի՝ մոպեդի վարորդական վկայականի տրամադրումը, միջազգային չափանիշներին համապատասխան, պարտադիր կդառնա մարտի 28-ից: Այդ օրվանից պարտադիր կդառնա նաեւ մոպեդների գրանցումը,- նշեց Գոմելաուրին:

Նա նշեց նաեւ, որ բջջային հավելվածով հնարավոր կլինի փոխել տրանսպորտային միջոցների պետական համարները՝ առանց գործակալություն հայտ ներկայացնելու, հեռավար կարգով:

ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄԸ ԿՇԱՐՈՒՆԱԿՎԻ

ՆԳ նախարարն իր խոսքում մանրամասն խոսեց իրավապահ մարմինների գործունեության բարեփոխման, համապատասխան տեխնիկայով եւ հանդերձանքով վերազինման, գերատեսչության հնարավորությունների ուժեղացման վերաբերյալ:

Ըստ Վախթանգ Գոմելաուրու, գերատեսչության գործունեության բարեփոխումը, իրավապահ մարմինների աշխատանքի առավելագույն թափանցիկությունը գլխավորապես ուղղված է գլխավոր առաջնահերթության՝ հասարակության անվտանգության ապահովմանը: